# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

## « ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-21/2 » գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ ներկայացված հայտերի գնահատման նիստի

2021-11-08-ին ժամը 12:00

գ.Գոռավան, Գ.Մարգպետունի 8

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ֆրինա Նեսեսյան | գլխ. հաշվապահ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Իշխան Փափազյան | ուսուցիչ |
| | Քրիստինե Կարապետյան | ուսուցչուհի |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Լուսինե Բազիկյան | գնումների համակարգող |

1. <u>ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կազմակերպված բանակցությունների վերաբերյալ</u>

Նեսեսյան Ֆրինա

Հաշվի առնելով, որ ''Գոռավանի միջնակարգ դպրոց'' ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 13-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակցի՝ «Ձեյթուն Սվիթ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցել է գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերի 8.7 կետի համաձայն՝ հաղթողին որոշելու նպատակով կասեցվել է հայտերի բացման նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցին ծանուցում է ներկայացվել՝ հրավիրելով գների նվազեցման շուրջ բանակցությունների 2021թ. նոյեմբերի 08-ին ժամը 12:00-ին, կամ նվազեցված գնային առաջարկները ուղարկել lusine.bazikyan@bk.ru էլեկտրոնային փոստին՝ բնօրինակ տարբերակից սկանավորված ձևով կամ էլեկտրոնային ստորագրությամբ:

ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կազմակերպված բանակցություններին չի մասնակցել, ինչպես նաև էլ. փոստով չի ներկայացվել նոր նվազեցված գնային առաջարկ <<Ձեյթուն Սվիթ>> ՍՊԸ-ի կողմից:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0:***

**2. <<ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-21/2>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին և ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին.**

Նեսեսյան Ֆրինա

**2.1** Հանձնաժողովի քարտուղարի կողմից գնահատման թերթիկների երկուական օրինակ հանձնվեց գնահատող հանձնաժողովի անդամներին:

Համաձայն հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների՝ գնային առաջարկ ներկայացրած ''Ռուզ-Մարտի'' ՍՊԸ-ի, ''ԷՄՄԱ'' Ա/Կ-ի, ''Ձեյթուն Սվիթ'' ՍՊԸ-ի և ''Անահիտ Հովակիմյան Հրաչիկի'' Ա/Ձ-ի հայտերը բավարար են գնահատվել, քանի որ հայտերը ներկայացվել են Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի մասնակիցների ներկայացրած հայտերի գնահատման արդյունքները.

| Չափաբաժնի համարը | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը | Անհամապատասխանության նկարագրություն |
|---|---|---|---|
| 1-ին, 12-րդ | <<ԷՄՄԱ>> Ա/Կ | բավարար | - |
| 1-12-րդ, 14-17-րդ | <<Ռուզ-Մարտի>> ՍՊԸ | բավարար | - |
| 8-րդ | Անահիտ հովակիմյան Հրաչիկի ԱՁ | բավարար | - |
| 12-րդ, 13-րդ | <<Ձեյթուն Սվիթ>> ՍՊԸ | անբավարար | Ներկայացվել է նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ |

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը, ներկայացված գնային առաջարկները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այն է. Հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին՝ նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ ներկայացված լինելու պատճառով՝ «ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգը 13-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

**2.2** Գանձման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման մասին.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Չափաբաժնի համարը |
|---|---|---|
| 1-ին տեղ | <<Ռուզ-Մարտի>> ՍՊԸ | 2-11-րդ, 14-17-րդ |
| 1-ին տեղ | <<ԷՄՄԱ>> Ա/Կ | 1-ին, 12-րդ |

Հաստատել «ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ -21/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հանձնաժողովը բավարար է գնահատում նաև առաջին տեղ գրաված մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից սույն արձանագրության 2.1-րդ կետով ներկայացված գնահատման թերթիկները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը, այն է. Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝

«ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել

- « Ռուզ-Մարտի » ՍՊԸ-ին՝ 2-11-րդ և 14-17-րդ չափաբաժինների մասով:
- « ԷՄՄԱ » Ա/Կ-ին՝ 1-ին և 11-րդ չափաբաժինների մասով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0:*

## 3. Պայմանագիր կնքելու որոշման մասին և անգործության ժամկետը հաստատելու մասին

Նեսեսյան Ֆրինա

''Գնումների մասին'' ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետերի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, և անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0*

## 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Նեսեսյան Ֆրինա

ԱՄԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակիցների հետ գնման պայմանագրեր կնքելու հաջորդ աշխատանքային օրը **ժամը 15:00-ին** ''Գոռավանի միջնակարգ դպրոց'' ՊՈԱԿ-ի շենքում՝ Արարատի մարզ գ.Գոռավան, Գ.Մարզպետունի 8:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0*

Հանձնաժողովի նախագահ՝ _______ Ֆ.Ներսեսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _______ Ի.Փափազյան

_______ Ք.Աստրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _______ Լ.Բագիկյան